

Շահութաբաժնային քաղաքականություն և շահույթի վճարման վերաբերյալ որոշումներ

“ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲԸ Շահութաբաժնային քաղաքականությունը իրականացվում է համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի, Կանոնադրության և “ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲԸ Շահութաբաժնային քաղաքականության”:

“ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲԸ Շահութաբաժնային քաղաքականություն (նոր խմբագրությամբ).

Ընդունվել է “ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲԸ 31.07.2014թ. Միակ բաժնետիրոջ N°4/2014 որոշմամբ: Կարգավորում է Բանկի տարեկան գործունեության արդյունքում բաժնետիրոջ շահութաբաժնի ստացման իրավունքը:

2010թ. ապրիլի 29 Բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 01/10 Որոշում

Ուղղել 42 964 000 ՀՀ դրամ, որը կազմում էմ 2009թ. Բանկի մաքուր շահույթի 5 %, Բանկի պահուստային հիմնադրամ, իսկ շահույթի մնացած գումարը 816 316 000 ՀՀ դրամի չափով չբաշխել և շահութաբաժին չվճարել:

2011թ. ապրիլի 26 Բաժնետիրոջ ընդհանուր ժողովի թիվ 02/11 Որոշում

2010թ. արդյունքներով ստացված Բանկի մաքուր շահույթը 4 178 411 949 (չորս միլիարդ մեկ հարյուր յոթանասունուր միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար ինը հարյուր քառասունինը) հայկական դրամը բաշխել հետևյալ կարգով՝

ա. Ուղղել 208 920 597 (երկու հարյուր ութ միլիոն ինը հարյուր քսան հազար հինգ հարյուր իննսունյոթ) հայկական դրամը, որը կազմում է 2010թ. Բանկի մաքուր շահույթի 5 %, Բանկի պահուստային հիմնադրամ:

բ. Բանկի բաժնետիրոջը (ՎՏԲ Բանկ ԲԲԸ) վճարել տարեկան շահութաբաժին 3 500 000 000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) հայկական դրամի չափով:

գ. Ուղղել 2010թ. Բանկի մաքուր շահույթի մնացորդը 469 491 352 (չորս հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր իննսունմեկ հազար երեք հարյուր հիսուներկու) հայկական դրամը “Նախորդ տարիների չբաշխված շահույթ” 5312 հաշվին:

Հաստատել Բանկի մեկ սովորական բաժնետոմսի շահութաբաժնի չափը 2 743,96 (երկու հազար յոթ հարյուր քառասուներեք) հայկական դրամ և 96 (իննսունվեց) լումայի չափով:

Սահմանել շահութաբաժնի վճարման ժամկետը 29 ապրիլի 2011թ. մինչև 31 մայիսի 2011 թ.:

2012թ. ապրիլի 27 Միակ Բաժնետիրոջ թիվ 01/2012 Որոշում

2011թ. արդյունքներով ստացված Բանկի մաքուր շահույթը 1 669 929 448 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսանինը հազար չորս հարյուր քառասունույթ/ հայկական դրամի չափով բաշխել հետևյալ կարգով`

ա. Ուղղել 83 496 472 (ութսուներեք միլիոն չորս հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամը, որը կազմում է 2011թ. Բանկի մաքուր շահույթի 5 տոկոսը, Բանկի պահուստային ֆոնդ.

բ. Բանկի բաժնետիրոջը (ՎՏԲ Բանկ ԲԲԸ/ վճարել տարեկան շահութաբաժին 1 586 432 976 (մեկ միլիարդ հինգ միլիոն ութսունվեց հազար չորս հարյուր երեսուներկու հազար ինը հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ.

Բանկի մեկ սովորական բաժնետոմսի համար սահմանել շահութաբաժնի չափը 1243 (մեկ հազար երկու հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամի և 75 /յոթանասունհինգ/ լումայի չափով:

Սահմանել շահութաբաժնի վճարման ժամկետը 27 ապրիլի 2012թ. մինչև 31 մայիսի 2012թ.:

2012թ. մայիսի 31 Միակ բաժնետիրոջ թիվ 02/2012 Որոշում

Երկարաձգել շահութաբաժնի վճարման ժամկետը մինչև 30.06.2012թ.` ավելի վաղ սահմանված Բանկի Միակ բաժնետիրոջ առ 27.04.2012թ. թիվ 1/2012 որոշմամբ:

2012թ. հունիսի 26 Միակ բաժնետիրոջ թիվ 03/2012 Որոշում

Փոփոխել շահութաբաժնի վճարման կարգը` հաստատված Բանկի Միակ բաժնետիրոջ 31.05.2012թ. թիվ 2/2012 որոշմամբ, և սահմանել, որ Բանկը շահութաբաժինը վճարում է մինչև 30.06.2012թ. այն դեպքում, եթե շահութաբաժնի վճարման ժամկետի օրը Բանկը չխախտի կապիտալի համարժեքության նորմատիվը:

2012թ. սեպտեմբերի 5 Միակ բաժնետիրոջ թիվ 05/2012 Որոշում

Վճարել շահութաբաժինը համաձայն Միակ Բաժնետիրոջ 27.04.2012թ. №1/2012 Որոշմամբ սահմանված պայմաններին:

Սահմանել շահութաբաժնի վճարման ժամկետը 2012թ. սեպտեմբերի 5-ից մինչև 2012թ. սեպտեմբերի 10-ը՝ պայմանով, որ շահութաբաժնի վճարումը չի հանգեցնի Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվի խախտմանը:

2013թ. ապրիլի 25 Միակ բաժնետիրոջ թիվ 1/2013 Որոշում

Հետաձգել շահութաբաժնի վճարման հարցը Բանկի Բաժնետերերի արտահերթ ժողովի քննարկմանը, որի անցկացման ժամկետը սահմանել 26.04.2013թ. – 31.12.2013թ.:

2013թ. դեկտեմբերի 30 Միակ բաժնետիրոջ թիվ 2/2013 Որոշում

191 041 000 (հարյուր իննսունմեկ միլիոն քառասունմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը, որը կազմում է 2012թ. Բանկի մաքուր շահույթի 5%, ուղղել Բանկի պահուստային ֆոնդ, իսկ 2012թ. Բանկի մաքուր շահույթի մնացած մասը՝ 3 629 769 000 (երեք միլիարդ վեց հարյուր քսանինը միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով չբաշխել և շահութաբաժին չվճարել:

2014թ. ապրիլի 29 Միակ բաժնետիրոջ թիվ 3/2014 Որոշում

Ուղղել 158 450 406 (հարյուր հիսունութ միլիոն չորս հարյուր հիսուն հազար չորս հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որը կազմում է 2013թ. Բանկի մաքուր շահույթի 5%, Բանկի պահուստային ֆոնդ, իսկ 2013թ. Բանկի մաքուր շահույթի մնացած մասը՝ 3 010 557 719 (երեք միլիարդ տասը միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամի չափով չբաշխել և շահութաբաժին չվճարել:

2015թ. ապրիլի 29 Միակ բաժնետիրոջ թիվ 1/2015 Որոշում

Չվճարել շահութաբաժին Բանկի միակ բաժնետեր ՎՏԲ Բանկ ԲԲԸ-ին 2014 թ.գործունեության արդյունքում շահույթի բացակայության կապակցությամբ:

2016թ. ապրիլի 29 Միակ բաժնետիրոջ թիվ 2/2016 Որոշում

Չիրականացնել շահութաբաժինների վճարումը Բանկի միակ բաժնետեր՝ ՎՏԲ Բանկ ՀԲԸ-ին ըստ 2015թ.գործունեության արդյունքերի շահույթի բացակայության կապակցությամբ:

2017թ. ապրիլի 28 Միակ բաժնետիրոջ թիվ 2/2017 Որոշում

Չիրականացնել շահութաբաժինների վճարում Բանկի միակ բաժնետեր ՎՏԲ Բանկ (ՀԲԸ)-ին՝ 2016թ. գործունեության արդյունքում շահույթի բացակայության կապակցությամբ:

